


Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ժ Ի Ն

Դ Ա Ր Զ Ը

ՈՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ

ՍԷԿ ԱՐԱՐՈՒԱԾ



Ա Ն Զ Ի Ն Ք

ՏՐԻԱՏ Թագաւոր Հայոց

ԱՇԽԷՆ Թագուհի

ԳՐԻԳՈՐ Լուսաւորիչ ՀայուԹեան
ՀՈՒՓՍԻՄԷ Կոյր, փոխտոտական Հոռմէն
ԽՈՍՐՈՎԻԳՈՒԹՅՏ Տրդատին քոյրը
ԱՐԶԱՆ Քրմապետ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Տրդատին Թախաը սինաշար պոխտակ մարմարաշէն։
Դրասանդներ կախուած ամէն մէկ պատշգամբէ։ Գիւ-
մացի պատին վրայ բացուած է մեծղի դուռ մը, ուսկից
կը ցնանունի լեռներու շղթան և ծմակներ ծառերով հո-
վանաւոր, թախտին մէջ կան վաճաղներ, Անաշխտի կուռ-
քերը։ Բազկաթոռներ վազրենիներով ծածկուած և ու-
կեզրուազ բեմ մը յատուկ Տրդատ Թագաւորին։ Այս
Թախաը արքայական ամբարանոցի հովանոցն է։ Թագա-
ւորը և արքունական ընտանեքը ամառ ատեն հոս կու-
գան զովանալու համար։

ՏՐԻԱՏ

Կը բազմի իր աթոռին վրայ և Գրիգորին կը հարցնէ։

Տեսար զանոնք։

ԳՐԻԳՈՐ

Հոփսիմէն։ Այո՛ տեսայ։ Ան իր խում-
բին հետ է, միշտ ծառերուն տակ, ամէնէն
ի միասին կ'երգեն ու կ'աղօթեն։ Եւ ա-
նոնց այդ աղօթքին միմունջը դէպ ի պատ-
դերու լուսթեան կը հասնի։

ԵՐԳ

Թախտի դրան դիմացէն անցնող Հոփսիմեանց խում-
բին նուազէն կը լսուի։

Հոն վերը, հոն վերը պիտի թռին մեր
հոգիները։ Հոն վերը, ամէն մէկ սուրբի
առջև աստղ մը՝ ճրագի նման վառ վառ
կը վառի։

Հոն վերը, հոն վերը, կապոյտին մէջ,
լոյս ճառագայթներով լոյս ծաղիկներ պի-
տի հիւսնէր։

ԳՐԻԳՈՐ

Արքայ, լսած եմ, որ երբ կոյս և մա-
քուր հոգիներ, այսպէս կ'երգեն անոյշ,
փափկանոյշ, թոչուններն կը լսեն, և
զմայլած, մտիկ կ'ընեն անոնց երգերն
խանդակաթ։

ՏՐԻԱՏ

Տկար մարդ. դուն իսկ յուզուած ես
այդ կոյսերուն երգովն։ Բայց դուն Գրի-
գոր գիտնալու ես որ ընդհանրապէս ա-
նուշարոյր վարդն է որ մահացու փուշեր
կ'ունենայ։

ԳՐԻԳՈՐ

Տէր արքայ, ոչ թէ անոնց երգն, այլ
զաղափարն է որ զիս կը դիմէ։

Եւ դուն գիտնալու ես որ Հոփսիմէ
երէկ քեզի համար կ'աղօթէր։



Խոսրովիդուխտ. — Khosrovitougd.

ՏՐԴԱՏ

Ըրածը կեղծաւորութիւն է:

ԳՐԻԳՈՐ

Կը սխալիս:

ՏՐԴԱՏ

Ուստի, ըսել է որ այդ կոյսը և ընկերները, իրենց հաւատքին ցրտութեան մէջ, կ'երազեն ոսկրներու և դիակներու յարութիւնը:

ԵՐԳ

Հիփսիմեանց կոյսերու ուրիշ մէկ խումբը կ'անցնի, անոնք կ'երգեն.

Յնորական աշխարհիս համար, գոցուած են մեր աչքն ու ականջներ. սիրտ ու սէր չունինք անոր համար:



Հիփսիմէ. — Ste. Ripsimé.

Ոսկի սանդուխ մը կախուած է դրախտի գոռէն: Դէպ ի վեր քոյրեր, դէպ ի վեր թոխեր:

ՏՐԴԱՏ

Կատարեալ խենթուկներ...

ԳՐԻԳՈՐ

Աստուած մ'ունին այդ աղջիկները: Աստուած մը, որ իր ծայրայեղ ցաւերուն մէջ կը գթար «Հայր թող դուստր» ըսելով:

Ան կը նստէր զինքը արծաթով ծախողին հետ և կերակուր կ'ուտէր, մտերմօրէն կը խօսէր անոր հետ: Իր աշակերտներն զինքը կ'ուրանային և ինքն անոնց ոտուռները կը լուար:

Ինքը բոլորովին մաքրութիւն էր, և պոռնիկ Մարիամը ամէն մեղքերէն կ'ար-

ձակէր, փարիսեցիք կեղծ անմեղներուն ըսելով. «Անմեղը ձեր մէջէն թող քար նետէ անոր վրայ»...
 —

ՏԵՍԱԼՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Վահագն կուրքին առջև կը հասնին Տրդատ և Գրիգոր. քրմապետ Արծաճը մեհեմեդին զոհէն ներս մանեկով կ'ըսէ.

ԱՐՁԱՆ

Տէ՛ր, գուշակութիւն մը կայ, նոր մարգարէութիւն մը:

ՏՐԴԱՏ

Ինչ գուշակութիւն:

ԱՐՁԱՆ

Թէ՛ Մաւրսի գազաթէն ճերմակ նոր արծիւներ թռան, և կտրեցին աստղերուն ճամբան:

ՏՐԴԱՏ

Միթէ այդ գուշակութիւնը Հոռոմէն նուրի կոյսերուն համար է:

Ոչ մէկը կրնայ կտրել ուղին, ինչ որ քաղն է գծած հայուն:

Թող այդ կոյսերը թոյն վեր, միշտ դէպ ի վեր, և իրենց հրեշտակի մատուցներով զարնեն զրախտի եօթը դռները:

ԳՐԻԳՈՐ

Տէ՛ր . . .

ՏՐԴԱՏ

Եւ դուն կը ճանչնաս անոնց Աստուածը:

ԱՐՁԱՆ

(Աստուծոյ). Վարագորքը կը բացուի...

ԳՐԻԳՈՐ

Տէ՛ր անոնք կը պաշտեն այն Աստուածը, որուն մէջ հրամանով դարերն իսկ կանգ կ'առնեն արեւուն հետ: Կը պաշտեն այն խաչուած Տէ՛րը, որուն լոյս շիրմին մէջ խաւարեցան Ոլիմպոսի վաւառտ աստուածութիւնները: Եւ Գողգոթայի շուրթին

տակ սուտ աստուածները սարսոցան և ինէղգեքուղը գնհնին ժայռերէն վար գաւհավէժ, կրակ լճին մէջ կործանեցաւ:

Հիւս կրօնքը ապականած է նոխագնեքուղիակին հետ:

ԱՐՁԱՆ

Տէ՛ր արքայ չի լսե՛ս այս նախատինքը. տե՛ս ահաւաստի Գրիգոր կը պարտաւէ մեր հին կրօնքը, կ'ուրանայ մեր աստուածութիւնները:

Թագաւորին պարտքն է վրէժ պահանջել աստուածուրաց հպատակէն:

Տէ՛ր արքայ, երէկ իսկ պաշտամունքի պահուն, դուն իսկ տեսար որ Գրիգոր հասարակաց և մեր ամենուս առջև չուզեց խնկարկել Հայաստանի վահեմահեմ աստուածներուն:

ՏՐԴԱՏ

Այո՛, ես իսկ վկայ եմ, որ Գրիգոր եւրէկ չուզեց պաշտել մեր աստուածութիւնը: Արծաճն, դուն քու աւագանի քուրմեւրով, անոր պատիժն որոշեցէք:

ԱՐՁԱՆ

Ուրացողին պատիժը մահ է:

ԳՐԻԳՈՐ

Տոյ՛ տալով կուրծքն կախուած խալը, կ'ըսէ.

Ես սուր չունիմ, սակայն կուրծքս կախուած այս խալը, պիտի ազատէ զիս դժոխային աստուածներու հազար ու բիւր տանջանքներէն:

Քրիստոսը կը պաշտեմ, և անոր համար պատրաստ եմ չարչարուելու և մեռնելու:

ՏՐԴԱՏ

Կը հրամայեմ որ պատժուի ուրացեալը, բայց չի մեռնի:

ԱՐՁԱՆ

Խոր վիրապին մէջ թող իջնայ, իր նոր կրօնքին վարդապետութիւններն որոճայ, հոն գազաններուն թող քարոզէ խաչուած Քրիստոսին աստուածութիւնը:

Կը մեկնեն Արծաճ և Գրիգոր:

ՏՆՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԻ

Արքունական բուրաստան, մարմառէ արձաններ մամ-
նապատ. Թուփեր մշտադաշտ. մէկ զծի վրայ շարուած
զուգահեռական ծառազարդ ուղի մը: Աւազանին մէջ մար-
մառէ վիշապին բերեցն կը վազէ ջուրը, խոսրովիդուխտ
կը լեցնէ իր ոսկեգրուազ բաժակը, իմելու պահուն, ի-
րեն քով կը շանի իր եղբայրը Զաքարէ Տրդատ:

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՈՒՅՏ

Եղբայր, ինչ է լսածս: Գրիգորի մը
պէս բարի անձը կը լընս, և ամբարիշտ
Արձանին ձեռքը կը ձգես...

ՏՐԻԱՏ

Ուրացողը չի կրնար բարի ըլլալ:

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՈՒՅՏ

Այո՛, այն ուրացողը միայն բարի չըլ-
լար, որ հասարակութեան շարիքի ու կոր-
ծանումի պատճառ կ'ըլլայ: Գրիգորի յան-
ցանքն անհատական է, իրեն հոգեկան
համոզումը ինչ փնտս բերուա ինծի կամ
քեզի, Թագաւորութեանդ կամ ամբողջ մեր
ազգութեան:

ՏՐԻԱՏ

Դուք կ'իններ, ձեր զգացումները զօրաւոր
է, բայց զատողութիւններդ տկար:

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՈՒՅՏ

Եղբայր, Աստուծոյ ափին մէջ է կեան-
քիդ իւղը, արդ կը շարժես զայն, ու կը
թափի կեանքիդ իւղը, ապերախտ զբա-
նուելով այն Գրիգորին, որ երախտիքի
մեծ արժանիքն ունի:

ՏՐԻԱՏ

Թող կեանքիս տարիները Աստուծոյ ա-
փէն դուրս թափին, Թագաւորը ամէն գնով
պաշտպանելու է արդարութեան իրաւուն-
քը: Գրիգոր անհատատարիմ զանուած է
հայրենի աստուածներուն. ով որ իր նախ-
նի կրօնին հիմերը կը տապալէ, ազգին
առջև անոր երախտիքը ջնջուած համա-
րուելու է: Ապերախտին վրայ զթալը չա-
րութիւն է:

Գրիգոր նախատեց Հայաստանի աս-
տուածները, Թող արդ զտնէ իր պատիժը
այն վիրապին մէջ, ուր արեն իսկ կրնայ
սառիլ:

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՈՒՅՏ

Տրդատ դուն փոխուած ես, Գալիբը
կաշկանդած են միտքդ ու դատողութիւնդ:
Ահաբեկած ես կանգուարի Անհատական
ըութմբու կոանմայն շառաշնեբն:

ՏՐԻԱՏ

Խոսրովիդուխտ, գիտնալու ես որ Թա-
գաւորը շատ անգամ ստիպուած է հազ-
նելու իր հպատակներուն համոզումը:

Վեհապետը, պարագային համեմատ կ'ըլ-
լայ քարապաշտ, ծառապաշտ, կրակա-
պաշտ:

Տես տակաւին մեր երկրին մէջ վառ
վառ կը ծխան Հուր-Բակ ատրուշանները:
Քոյր իմ Թողունք մեր ազգին նանրա-
հաւատ պաշտամունքն, Թող Գրիգորի խըն-
դիրը. հիմայ ըսէ ինծի, Հոփսիմէն միտք
ունի՞ արքունիքս գալու:

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՈՒՅՏ

Կը հասկնամ... Մարդիկ օծի պէս կը
փոփոխ իրենց պաշտամունքի շապիկը:

Հոփսիմէն քեզ կը հետաքրքրէ. գիտ-
ցիր որ ան իր խումբին հետ միշտ ազօթքի
է: Ամէն առտու ինքն և իր ընկերուհի-
ները ծմակներուն մէջ, առուակին վճիտ
ջրով պոտերին կը լուան, իրարու ծա-
մերն կը սանտրեն և կ'օծեն խնկարոյր
իւղերով, և կը սպասեն Յիսուսին:

ՏՐԻԱՏ

Ով է իրենց այդ սպասածն:

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՈՒՅՏ

Քրիստոնեայ կոյսերու փեսան է ան,
հրեաներէն խաչուած Մեսիայն, նոր Աս-
տուած մըն է այն:

ՏՐԻԱՏ

Եւ դուն անոր կը հաւատաս:

ԽՈՍՐՈՎԻՌՈՒԹՅՈՒՆ

Ես քեզ կը պատասխանեմ քու առաջին հարցմունքիդ, Հոփփսիմէ և իր խումբը կ'երենան միշտ նոր հարսերու պէս պարկեշտագեղ, պատրաստ երկնքի դռնէն ներս մտնելու: Ո՛նոնց վարսերուն վրայ կը ծրփայ շղարշ մը, ագամանդ ճարմանդով հաստատուած: Չիթենիի ճիւղեր ձեռուրնին բռնած, խաչափայտի մը շուրջը կը դառնան:

Ո՛նոնց կ'ուզեն չարչարուիլ, զրկուիլ աշխարհի սփոփանքներէն, կը ցանկան իրենց արիւնով աւազան մը լեցնել և լուալ մեղքերնին:

ՏՐԻԱՏ

Չքսե՛ս, անոնց նոր վեհապետներ Ծն, հաւատարիմ իրենց անըջական բաղձանքներուն:

Ասոնց կ'երեւի կ'ուզեն կոյս մնալ, ինչպէս Ֆրասգաթիի ծմակներուն յաւերժարսերն ազնուազարմ:

Բայց քանի որ Տրդատ ողջ է, նոր սնտրի պաշտամունք մ'ալ կարելի չէ որ ազատութիւն գտնէ թորգոմական հոյին վրայ:

ԽՈՍՐՈՎԻՌՈՒԹՅՈՒՆ

Վեհապանձ են արքաներն, որ կը յարգեն իրենց հպատակներու ազատութիւնը:

ՏՐԻԱՏ

Այդ ազատութիւնը կրնամ ես իրենց տալ, բայց ոչ յայտնապէս. ազատ պիտի ըլլայ Հոփփսիմէն, եթէ ընդունի իմ փափագս և իբրեւ թագուհի մը ապրի արքունիքիս մէջ: Հակառակ պարագային զայն կը յղեմ թիվուրի, թող հոն ջըրվէժին շուրին տակ ծաղկէ պսակներ պատրաստէ Սիւրիւլայի ոսկեսար անդրիին:

ԽՈՍՐՈՎԻՌՈՒԹՅՈՒՆ

Չար է մտածութիւնդ. խեղճ կոյսերը հազիւ Հոռմի կայսեր ձեռքէն կրցեր են ազատիլ. հիմայ որ անոնց հայկական դրօշին ապաւինած՝ մեր պաշտպանութիւնը կը վայելեն, դուն կ'ուզես դաւաճանի դեր



Ս. Գր. Լուսաւորիչ. — S. Grégoire Illuminateur.

մը կատարել, զանոնք բռնակալ կայսեր մատնելու դիտումով: Ստորնութիւն է այդ մտածութիւնդ:

ՏՐԻԱՏ

Գոյր կը զարմանամ որ ինչպէս այսպէս շուտով այդ կոյսերը գրեթէ զրաւած են

իրենց։ Մի խարուիր անոնց ստապատիր
խօսքերովը։

Փրիստոնեաները կը համբուրեն տա-
ճարին դռները, սակայն սրտով կ'ատեն
իրենց ընկերները։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒՅՏ

Բայց անոնց վարդապետը քարոզած է
թէ, «Սիրեցեց ձեր թշնամիները»։ անոնք
բարի ըրիստոնեաներ են, անյիշաչար, ու
կը սիրեն զիրենք ատողները։

ՏՐԻԱՏ

Եթէ այդպէս է, Հոփսիմէն զիս պէտք
է սիրէ։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒՅՏ

Ան քեզ ատած չէ բնաւ։

ՏՐԻԱՏ

Արեմն զիս կը սիրէ։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒՅՏ

Ո՛չ, անոր սէրը գերբնական է, նուի-
րուած արդէն ուրիշի մը։

ՏՐԻԱՏ

Արդ ըսել է որ իմ վեհապետութեանս
մէջ, ինձմէ աւելի գերադասելի մը գտած
է այն։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒՅՏ

Տրդատ մի՛ վրդովիր, ես քու խնդիրդ
երբ իրեն առաջարկեցի, պատասխանեց։

«Ես աշխարհակալ կայսրներու քաղա-
քացին եմ, օրիորդ հռովմէական, ազնուա-
զարմ աւագ ցեղէ, զիւցազներու գեր-
դաստանէն, Մարմառ ոսկի սանդուխներէն
զիս ուզեցին բարձրացնել և Հոռմի կայ-
սեր զշխոյն ընել։ ես մերժեցի այդ փառքը
ոչ թէ հայ արքայի մը սիրոյն համար,
այլ որպէս զի «զՔրիստոս տէրն շահե-
ցայց» ...

ՏՐԻԱՏ

Հասկցայ, ուրեմն այլևս յոյս չկայ։ Ես
կը կատարեմ Հոփսիմէի այդ փափագը,
ան կ'երթայ կը զտնէ իր խաչուած քրիս-
տոս Աստուածը։ Այլևս ես անպարտ եմ։
Ան իմ գթութեանս արժանի չէ։ Տխմա-
րունին իր ընկերունիներով մատուցելու
են չարչարանքներու։

(Մնացածը յաջորդով)

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

Մեր ազգին կեանքին եւ յառաջդիմութեան գործունէութեան վրայ պայծառ եւ
շահեկան տեղեկութիւններ բովանդակող Թերթ մ'է Արարատ ամսագիրը, որ 4 տարիներէ
ի վեր զմայելի յարատեւութեամբ կը հրատարակուի եւ լին-
տնի Հայոց Միացեալ Լիկերութեան՝ պաշտօնականութիւնը կը
ծնւոյցնէ, խմբագրապետ եւ խմբագիրներ ունենալով հմուտ
անձնակազմներ, ինչպէս՝ Գ. Մ. Գրիգորի եւ այլք։

ARARAT

Անգլիապէտ հայորդւոց ցեքմապէս կը յանձնարարենք բաժանորդագրուիլ եւ ան-
գլիախօս ազգերու մէջ տարածել «A R A R A T»-ը, գիտնալով որ գրական եւ պատ-
մական Տոյս հաւաքածոյի մը համար տրուած դրամը՝ շահաբերուած ըսել է։

Ներկայ տարուան Յունուարի Թիւին կողքը՝ Վ. Յակոբեան ճարտարապետը նկա-
րած է։ Կը ներկայացնէ հայկական ճարտարապետութիւնն յիշմոյղ կամարակապ մի,
որուն խարսխի վրայ փորագրուած է «ՏԷՐ ԿԵՅՈ ԴՈՒ ԶՂԱՅՈ»։ Կամարակապին
խորքը հաստատուն կանգնած է Ս. Էջմիածնի տաճարը, կողքին երկրորդ էջը գրուած
է անգլիերէն Թրքահայաստանի քարտէսը։

Տարեկան բաժնեգիրն է 6 շիլլինկ։ Գիտէ՛ք Hon. Editor «Ararat». The Armenian
United Association of London, 47a, Redcliffe Sq. LONDON, S. W.

1. Բարեբաղդ ասիթը պիտի ունենանք՝ սոյն ազգագուտ Լիկերութեան մասին Բազմակէպի մէջ տեղեկութիւն,
նէր գետեղելու։